

«Հանրային ֆինանսներ» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Հանրային ֆինանսներ» (Public finances) կրթական ծրագիրը նպատակաուղղված է հանրային ֆինանսների ոլորտում ֆինանսական կառավարման մասնագիտական գիտելիքների խորացմանը և գործնական ունակությունների ձևավորմանը: Հանրային ֆինանսների մասնագետը մի կողմից տիրապետում է հանրային ֆինանսների կառավարման հմտություններին, մյուս կողմից օժտված է ֆինանսական ոլորտի մասնագիտական գիտելիքներով, վերջինիս առնչվող օրենսդրական ակտերի, հայեցակարգերի, ռազմավարական ծրագրերի խոր իմացությամբ և գործնականում դրանց կիրառման ունակություններով, որոնք անհրաժեշտ են հանրային ֆինանսների ոլորտի պետական մարմինների, ինչպես նաև հանրային հատվածի կազմակերպությունների գործունեության արդյունավետ կազմակերպման համար:

Շրջանավարտին շնորհվում է տնտեսագիտության մագիստրոսի որակավորում:

Ծրագրի տևողությունը 2 տարի է: Դասընթացների անցկացման և ուսումնառության ընթացքում մեծ կարևորություն է տրվում և դասախոսությունների, և գործնական աշխատանքների իրականացմանը, մասնագիտական գրականության ուսումնասիրությանը և քննարկմանը, վերլուծական աշխատանքների իրականացմանը, անհատական և թիմային աշխատանքներին, միջազգային փորձի ուսումնասիրմանը: Հատուկ նշանակություն է տրվում գործատուների պահանջներին, կազմակերպվում են նաև արտագնա գործնական պարապմունքներ՝ ֆինանսական կազմակերպություններում, անցկացվում են ոլորտի մասնագետների կողմից դասեր, կազմակերպվում առանձին խնդիրների հետազոտություններ և այլն:

Մասնագիտական դասընթացներին զուգահեռ մագիստրոսը համապատասխան փորձառություն է անցնելու պետական ֆինանսական համապատասխան կառույցներում՝ ծանոթանալով այդ դասընթացի շրջանակներում ուսումնասիրված նյութի գործնական կիրառական ասպեկտներին:

Ուսման վճարը մեկ տարվա համար 620.000 ՀՀ դրամ է:

Մասնագիտության նկարագիր

Հանրային ֆինանսներ կրթական ծրագիրը պատրաստում է հանրային ֆինանսների ոլորտում մասնագիտական բարձր ունակություններով և գիտելիքներով օժտված մասնագետներ, որոնք ունեն մեծ պահանջարկ՝ ՀՀ պետական ֆինանսական համակարգում, մասնավորապես տարբեր նախարարություններում, գերատեսչություններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում և այլն:

Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են տեսական և գործնական գիտելիքներ տնտեսագիտության տեսության, ֆինանսների, տեղեկատվական համակարգերի և մոդելավորման, հաշվապահական հաշվառման, վիճակագրության, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության, պետական ֆինանսների կառավարման, հարկային և մաքսային վարչարարության, պետական գնումների մեխանիզմի, ծրագրային բյուջետավորման, պետական պարտքի կառավարման և մի շարք այլ կարևոր առարկաների շրջանակներում:

Հանրային ֆինանսներ դասընթացի շրջանակներում ուսումնասիրվող բոլոր առարկաներն անմիջական կապված են հանրային հատվածի ֆինանսների նախագծման, բաշխման, վերահսկողության գործառույթների հետ և հիմնական ու ընտրովի առարկաների միջոցով «ստեղծում» են պատրաստի կադրեր՝ ոլորտը համալրելու համար:

Աշխատանքի հնարավորություններ

Ներկայումս աշխատաշուկայում առկա է այնպիսի մասնագետների պահանջ, որոնք խորությամբ տիրապետում են պետական ֆինանսների կառավարմանը և այդ ոլորտում նորարարական ձեռքբերումների կիրառմանը: Դասընթացն ավարտելուց հետո շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել՝

- ՀՀ Ազգային ժողովում՝ ֆինանսական և բյուջետային հանձնաժողովներում,
- ՀՀ ֆինանսների նախարարությունում,
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեում,
- ՀՀ համայնքների ֆինանսական բաժիններում,
- ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում և այլն: